



ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՆԻՄՈՅ

ԱՄԹԻՆԱՍ - ԼԻՐԱՆԱՍ

Թիւ 89/12

Անթիլիաս, 7 Յուլիս 2012

Մեծայարգ
Տիար Կիրակոս Գույումեան
Քուէյթ

Սիրելի՛ Պրն. Գույումեան,

Ուրախութեամբ ստացանք Մեզի ուղարկած Ձեր նոր հատորը՝ Հայ Դատին նուրիբունած Ձեր յօդուածներու հաւաքածոն, հայերէն եւ արաբերէն լեզուներով:

Արդարեւ, քաջածանօթ ենք որ երկար տարիներէ ի վեր անխոնջ կերպով կը պայքարիք Ձեր գրիչին նամրով մեր արդար դատը ծանօթացնելու օտարներուն, յատկապէս արաբ հանրութեան, ինչպէս նաեւ լուսարձակի տակ բերելու մեր ժողովուրդի արդար իրաւունքները: Վստահ ենք որ նման աշխատանքներ իրենց կարեւոր սատարը պիտի բերեն արդարութեան հետամուտ ժողովուրդներու գօրակցութիւնը ապահովելու տեսակէտէն՝ ի նպաստ մեր իրաւունքներու վերափորացման:

Կ'աղօթենք առ Ամենաբարին Աստուած, որ Իր հովանին անպակաս ընէ Ձեր վրայէն, որպէսզի նոյն խանդով շարունակէք Ձեր աշխատանքը: Թող Աստուած քաջաողջութիւն, յաջողութիւն ու երջանկութիւն շնորհէ Ձեզի եւ Ձեր հարազատներուն:

Հարապետական օրհնութեամբ եւ սիրոյ ջերմ ողջունիւ,

Աղօթարար՝

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵՄԻ ՏԱՆՆ ԿԻՆԻՄՈՅ